

6212

ԱՐԴՈՒԼԱՆ ԹԱՀԱՐԱՐԻ

(Անգլ. գործերի հրամանատար)

ՀԻՒՍԻՍ-ԱՐԵՒՄՏԵԱՆ
ԲԱՆԱԿԻ
ԵՐԿԱՄԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

(Համառոտ)

Թարգմ. պարսկերէնից



ԹԱԻՐԻԶ

Արդատականի Հայոց բեմական տպարան

1924

9(55)

թ-17

3(55)

10-17

90059
100
ՍՈՒՐԱ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

ST. NERSES SHNORHALI

LIBRARY

ARMENIAN PRELACY

ՏԷՐ

Արեգակնային քիւ 1302 (1924 մարտ 7)
Հուլիս 14 ին ՍՐԲՈՒԹԵԱՆ ԱՐՁԱՆԸ
նամբելիս, Սարգսյանի նրապարակում
կարգացել է ժողովրդի բոլոր խաւերի
ներկայութեամբ:

2012



Վերածնունդի փառք



113939-42

265-2012

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ST. NERSES SHNORHALI
LIBRARY
ARMENIAN PRELACY

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Իրանի բառնութեան, վերածնութեան
արձանը Նորին Գերագանցութեան
ՍԱՐԴԱՐԸ ՍՓԱՀԻՆ
նախընտրեալ առթիւ:

Իրան, սուրբ և սիրելի հայրենիք,
սնուցողը Ջամշիդի և Սիրուսի (Կիւրոս)
որդանը Խոսրովի և Քաուսի:

Երկար ժամանակից ի վեր քաջ զա-
ւակներիդ բացակայութեան պատճառով,
դձև, վեցհազարամիայ անկախութիւնդ
ձեռքից տուել ու կենտրոնական իշխա-
նութիւնդ էլ աշխարհ էր թուլացել, որ
քո նահանգներում ու գաւառներում ֆե-
ոդալների զանգն էր հնչում:

Ապրում էիր քո հնամեայ կեանքի
վերջին բուռները, խաւարի ջրապտույտի
մէջ թաղելով վերջ տալու ֆարսերի լոյ-

սի վերջին ճառագայթին, երբ յանկարծ կարող և ուժեղ ձեռքը, մեծ արդարագատութեան թենոցից դուրս գալով համայն աշխարհին ցոյց տուց, որ այս անարատ հող ու ջրի աստածները կային և դեռ կան:

Պահլաւեան խաղաղարար ցեղի, ամենակարող անհատի հոգին արթնացաւ Իրանի մեծանուն զաւակի սրտում, որպէսզի համայն աշխարհին լսելի դարձնի Իրանի մեծութեան ձայնը:

Այո, այդ Աստածային պարգեւ, որը իրանցիների փառքի ու վստահութեան սիմտոն է կազմում, որը լոյսը՝ խաւարից և հանգստութիւնը՝ տանջանքից զատեց՝ դա ինքը, Նորին գերազանցութիւն Սադադը Սփառն է:

Ողջոյն քեզ, ով դու Սադադը Սփառն, ով անվահներ գերմարդ, քաջութեան ու վեհութեան առուածը դու ես, որ քո կարող բազկով մեր սիրելի հայրենիքի ձեռքն ես բռնել և մենք էլ քո հրամանով մեր անարժան կեանքը ձեռնհրկս ափին դրած, Ձեր ու Խուրշուդի փայլի տակ ձերդ Դերադանցութեան հրամանները կատարելու համար, յաւիտենական

փառքի ակնկալութեան յուսով, նահատակութեան օշարակն ենք խմում:

Ով Իրանեան մեծ բանակի հիմնադիր և ով Քեհանի և Սասանեան ցեղի ազատիչ, զինուորականութեան հոգին ու սիրտը և ժողովրդի ուշադրութիւնն առ քեզ են ուղղւած, Քեզ, թող որ փառաբանենք և Քեզ Իրանի ազատիչն անուանենք: Քո կատարած մեծ ծառայութիւններդ Իրանի պատմութեան դարգարուն էջերն են կազմելու:

Մեր պարտքն է Աստուծոյ ակնկալել երկրի և ազգութեան պաշտպան Ձեր ու Խուրշուդ զրօշակի մեծութիւնն ու կարողութիւնը:

Այս անվահներ գերմարդի մտքի ու երկաթեայ կամքի տւած արդիւնները պարզ ու որոշ են, դէպի որը ուղղւած է ժողովրդի ուշադրութիւնը:

Այդ արդիւնքների շարքին են պատկանում միացեալ զինուորական ծառայութեան հաստատումը, որի հիմնումից դեռ երկար ժամանակ չէ անցել:

Սե ամպիրը, որ Իրանի մի ծայրից մինչև միւս ծայրն էին բռնել և երկիրը տառապանքի ու աւերակների տակ թա-

դնլ, միւս կողմից կեանքի ընթացքը փառած տախտակների վրայ լեռնանման ալիքներին էր յանձնէ, որոնց ոչնչացումը ամեն բոլէ սպասելի էր, երբ յանկարծ իր հրկաթեայ բռունցքով դաժան կողոպուտը սչնչութեան անդունդը նետեց և նպատակի նաւը փրկութեան ափը հասցրեց:

Հայրենիքի ծառայողները նրա անշափ ոգորմածութիւնից յուսալիր, իսկ զտաճանները իրաւազրկւած ու արգելափակւած են նրա ամուր բանտերում:

Այն, երանի միակ ազատիչի գործունէութեան նկարագիրը տալ, մեր ուժերից վեր է...

Քաջ զօրքի կատարած ծառայութիւնները ցոյց տալու համար կբուականանար միայն նրա հինգերորդ զօրամասի (կազմի) այսինքն հիւսիս-արեւմտեան բանակի ունեցած գործունէութիւնը համառօտակի տալով:

Հիւսիս արեւմտեան բանակը 1301 թւի (1922) Ջադ 14-ին, զօրքի այն միակ պաշտպանի շնորհիւ կազմակերպեց Ատրպատականում այն միջոցին, երբ այդ նահանգի հիւսիս-արեւելեան և ա-

րևմտեան շրջանները մի շարք խռովութիւնների ու պրովակացիաների շնորհիւ կոտորածների ու կողոպուտի ասպարէզ էր դարձել:

Յիշեալ զինուորական կազմակերպութիւնը թէպէտ և դեռ կատարեալ չէր, բայց և այնպէս Աստուծոյ զթութեամբ և յենած երկրի ազատիչի ոգորմածութեան նրա բաջ զինուորների փայլուն աւելների ծայրից, Ատրպատականի զանազան մասերում, պատմական գոհադութիւններով հրապարակ իջաւ և հետեւեալ ծառայութիւնները մատուցեց. —

1. Առաջին անգամ բաւականաչափ զօրք ուղարկեց Սօուջ-Ռուլալ, տաքածելով անկախութեան զբօշակը մի վայրում, ուր դեռ Սմկօ-ի անկախութիւն պահանջող զաժանագործ առաջնորդների ապստամբութեան ազդեցութիւնն էր տիրում:

Այդ շրջանի ցեղերի, իրենց ու իրենց նախնիների կատարած ծառայութիւնները մեր պատմութեան մէջ կայ, սակայն նրանց մի մասը երկար ժամանակից ի վեր ստիպւած դաւաճանների

ձեռքում երկպառակութեան գործիք էին
դարձել:

Մի շարք կռիւներից յետոյ նրանք
հաւատարմութեան ուղին բռնեցին, որով
և նրանց զաւակներն ու բարեկամները
Թէհրան գնալով ու Նորին Դերազանցու-
թեանը ներկայանալով, նրա շէմքում
ծառայելու համար սպարժանքով իրար
կանխում էին:

II. Կառավարութեան քանի տարի-
ներից ի վեր մնացած հարկերը զանձե-
լով, մի մեծ գումար պետական գան-
ձարանը մտաւ:

III. Հիմնարկութիւններին տեղեկու-
թիւն ու ընթացք և այն շրջանի ժողո-
վրդին յարմարութիւն տալու համար
Ուշնիի հեռագրատուներ հիմնեց:

IV. Գրաւած գիւղերը վերադարձ-
րեցին իրենց իսկական տէրերին:

V. Շնորհիւ մեր անկարողութեան,
հիւսիս-արեւմտեան շրջանը երկար տարի-
ներից ի վեր, մի շարք խռովութիւնների
էր ենթարկւած, իսկ ժամանակի պա-
ռակտիչ ու հետին միտք ունեցող կա-
ռավարութիւններն էլ, իրենց սեփական
շահերի համար, այդ կողմերի ցեղերին,

որոնք իրենց բնակութիւնն են հաստա-
տել այդ շրջանի մի ծայրից մինչև միւս
ծայրը, իրենց նպատակների իրագործ-
ման գործիք դարձրած, աւելի ու աւելի
երկպառակութեան հուրն էին բորբոքում:

Չնայած ձահ-սովան ցեղերը հիւսի-
սային սահմանադիւսում, իրենց անձնա-
կան ուժերով միշտ աշխատել էին սահ-
մանների պաշտպանութեան գործում,
բայց այդ ծառայութիւններով հանդերձ,
մի շարք անմիտ ցեղեր, դաւաճանների
դրդմամբ, հակառակ ընդհանուր խա-
ղաղութեան և օրինապահութեան, ի-
րենց ասպատակութեամբ ժողովրդի ան-
գործութիւնն էին խանգարում, այնպէս
որ նրանց ասպատակութիւնը տարած-
ւում էր յաճախ մինչև իսկ Բաղմեշա՝
Թաւրիզի դռները:

Այդ շրջանի հանգստութիւնը վերա-
կանգնելու և երկար տարիների խռովու-
թիւններին վերջ տալու համար, բաւա-
կանաչափ զօրք ուղարկեց Արդարիլ և
մի շարք պատերազմական գործողու-
թիւններից յետոյ ձահ-սովան բոլոր ցե-
ղերը Նորին Դերազանցութեան ողորմա-

ծուծեանը մտտահելով, ամբողջովին անձ-
նատուր եղան։

Զինուորական ծառայութեան գի-
տակցութիւնը, որ միշտ Ատրպատականի
բազմեցեալներն; սուրբ հայրենիքին ծա-
ռայելու գործի մէջ, յիշատակելի է դար-
ձրիւ, նորից վերահաստատուեց և նրանք
պետութեան հրամաններին ենթարկուելու
համար, հոգով ու մարմնով պատրաստակամ
գտնուեցին, ինչպէս որ այս գորտառնա-
կի կազմութեան սկզբից ի վեր բազմիցս
տեսակ-տեսակ ապացոյցներ են տուել։

Ֆուլթու և Շաթրու ցեղերը, ո-
րոնց ցեղապետներն էին՝ Ամիրը Աշայիր,
Ամիրը-Ֆիրուզ, Ամիրը Նոսրադ, Մարգա-
լի խան, Ամիրը Թուման և ուրիշները, ո-
րոնք այդ շրջանի խռովութիւնների գե-
կավարներն էին և իրենց շրջանում ֆե-
օդալական իշխանութիւններ ստեղծելով
և յենւած իրենց ցեղային ուժի ու նախ-
նիքների գործունէութեան վրայ, կեն-
տրոնական իշխանութեան չէին ենթարկ-
ւում և հրաժարւում էին զէնքերը յանձ-
նելու և հետեակ ու ձիաւոր մեծ ուժեր
կենտրոնացնելով Ալար բերդում, ապրս-
տամբութեան դրօշն էին պարզել։

VI. Յուսահատւած 38-օրեայ յոր-
դորանքերի արդիւնքից, որոնք կատար-
ւում էին Արդարիլի ժողովրդից կազմ-
ւած բանակաւորների միջոցով 1302 թ.
(1923, Ապր. 26) 4-ին համալի. զինուորական
բազայադիւ ուժը յարձակում գործեց Ա-
լարի վրայ, որտեղ կենտրոնացած էին
նրանք. մի քանի ժամ տեղի ուժեղ
կռիւց յետոյ խռովաբարների խմբերը
ցիր ու ցան եղան։

Մարգալի-խանը, Ամիրը-Թումանը մի
քանի հոգով սպանուեցին, Ամիրը-Աշայիր
խալխալցին, Ամիրը-Ֆիրուզը, Ամիրը-Նոս-
րադը և ուրիշ խմբեր գերի ընկան, իսկ
մնացած խռովաբարները միանալով՝ Ռա-
շիդը Մամալիքի, Մալարը Խաղանիի ու
Ամիրը Աշայիրի որդեկերանց հետ
Քէյի գիւղում մեր գործերի հետ մի
թիւթե կռիւ բռնելուց յետոյ այդ գիւղը
լրիցին և անցան Դարբանդ - Մաշրուլ
կոչւած անառիկ դիրքերում ամբանալու։
Այդ վայրը Ատրպատականի ամենադժ-
ւարին ու անառիկ վայրերից մէկն է
հաշոււմ, որտեղ նեղն ընկած ժամանակ
նրանք իրենց ուժերով ամբաջիւ և պա-
տերազմական գործողութիւնները շա-

բունակելով, միշտ յօգուտ իրենց ևն վերջացրել:

Ամրանալով յիշեալ վայրում, օկսեցին ժողովրդի հանդիսը վրդովել և պատրաստուում էին յարձակել ու կողոպտել Հերու գիւղաքաղաքը, որը Խալխալի կառավարական կենտրոնն է (գատաւորանիստ գիւղաքաղաքը). զինւորական ուժը դրանց կամայականութեանը վերջ տալու համար դէպի յիշեալ ամրութիւնը զիմեց և 1302 թ. (1923 Մայ. 2) Սովրի 11-ին խռովարարների հետ կուրբունելուց և մի քանի ժամ տեղոյ արիւնահեղ ու սոսկալի կուրից յետոյ, խռովարարները զինւորական ուժին չզիմանալով, հետեւեալ պարագլուխներն ու բէզզադանները սպանուեցին. —

- ա) Ահմադ Փաշախան — Ամիդը Սալթանէ, Ամիրը Աշայիրի տղան,
- բ) Սալարը Խաղան,
- գ) Հիւսէն Կուլի Խան՝ Արշադ տիտղոսով,
- դ) Օմրադ, որպէս յայտնի պարագլուխ,
- ե) Մուսաիր,
- զ) Մուհամադ Ալի և
- է) Ղուլամ Հիւսէն:

VII. Բացի յիշեալ պարագլուխների սպանելուց, սպանուեցին և 214 հրացանակիրներ իսկ 250 հոգի էլ գերի բռնուեցին, որոնց մէջն էր նաև Հիւսէն փաշան, Ամիրը Աշայիրի երրորդ որդին: Մնացեալ բէզերը ճնշուեցին ու ոչնչացան Դարբան-Մաշքուլն էլ զօրքի կողմից գրբաւեց. իսկ խռովարարների մի մասը, որը զօրքի սկիւնների առաջից փախչում էր, հետապնդուեց և Ղըզըլ — Օզան գետում խեղուեց: Այնպէս որ, երեքհարիւրամեայ Խալխալեան, Փոլաթլու, Շաթրլու ցեղերը հիմնովին ոչնչացուեցին և ոչ մի հետք չմնաց նրանց դաժան ինքնիշխանութիւնից:

Մի անգամ ընդմիշտ վերջ տալու համար հիւսիս արևմտեան շրջանի ինքնիշխանութեան, Ամիրը Աշայիրին, Ամիրը Ֆիրուզին, Ամիրը Նոսրադին և 12 բէզզադանների, որոնք գերի էին ընկել կուրբնութացրում, զինւորա դաշտային դատարանով ոչնչացման դատապարտուեցին՝ կախաղանի միջոցով:

Վերջապէս ճշմարիտ ու արդար վրէժխնդրութեան ձեռքը նրանց օձիքից բռնած, յաւիտենականութեան դատա-

բանը բաշեց և կողոսկուտի. կոտորածի ու սովի շրջանին վերջ տրուեց:

VIII. Հիւսէյն Ղուլի թախիշցին, որ Սալարը Աշջա տիտղոսն ունէր և որի խայտառակ բնթայրը Ատրպատականի համայն ժողովրդին բաջ յայտնի էր. զին. տոնների հետապնդմամբ ձերբակալեց և կախաղան բարձրացւեց. որից յետոյ այն շրջանի ղժբախտ ժողովուրդը, նրա պատճառած տանջանքներից ընդ միշտ ազատագրուեց:

Ջորբի անձնագործութիւնը. այսքան տարիներից ի վեր գոյութիւն ունեցող ցեղերին, արմատից ջնջելու գործի մէջ, գեղեցիկ կերպով հաստատուեց. որ բաջ զինուորների սյուլպատուայ շարքերի յարձակումների զիմաց այդ թայֆաները, (խմբակցութիւնները) որոնք խտուր ու պառակտիչ աստուածների ճիրաններով են ստեղծւած. կաղմակերպւել չեն կարող և ոչնչացնող կայծակը նրանց հիմքերը խախտեց (կախրը այրեց):

Այո, Իրանի նորին սրբութիւն և միակ ազատիչի արձակած հրամանները, ոչ մի կարող ոյժ չի կարող անուշապիր թողնել, որովհետև նրա սուրբ նպատակն է

տրդարութիւնն ու խաղաղութիւնը և կեդերման ու բարբարոսութեան խորտակումը:

Այս գործողութիւններում՝ Սուլթան Աբիմ Զադէն, երկրորդ Փոջի № 14 հետեակ զօրքի հրամանատարը և երկրորդ կարգի սպա՝ Աբդուլ Ղասսի խանը իրենց անւանի անունը, զինւորական նահատակների պատմութեան լջերում անջինջ պահելով, նահատակութեան օջառակը խմեցին և աշխարհի վրայ իւրայինները համար պատմական փառք թողին:

IX. Իբրև արդիւնք յիշեալ գործողութիւնների, Շահ սովան ցեղերի մընացորդները իրենց զէնքերը յանձնեցին և մէկ սուր*), որը նրանց վերջին զենքն

*) 1923 թ. ամբոնը սրահանգէս կաղմակերպւեց և այդ ոսկեայ սուրը, գորդարած թանգարժէք քարերով, որի վրայ փորագրւած էր Ատրպատականի քարաէզը, օտար պետութեանց ներկայացուցիչների և ժողովրդի ներկայութեամբ մատուցուեց հիւսիս-արեւմտեան ճամակի հրամանատարին, ուղարկելու Թէհրան և էր Նորին Գերագանցութեան:

էր, հարիւր բէզզադաների ներկայա-
ցուցչութեամբ Նորին Գերագանցութեան
նւիրեցին և ծառայութեան զնգակը
խելու մէջ պատրաստակամ միւս ցեղե-
րին կանխեցին:

Պատերազմական գործողութիւնների
աւդիւնք՝

ա) Ամբողջ Չահ-սովան ցեղերի զե-
նաթափումը.

բ) Ամիր Աֆշարի և խամսայի շըր-
ջանի զինաթափումը.

դ) 850 կտոր պետական և ալլոց
զիւղերի վերադարձումը տանջւած զիւ-
ղացիներին ու իրենց իսկական տէրերին.

դ) Շահ-սովան պետերի 19 տարւայ
տուրքերի դանձումը և պետական գան-
ձարան մտցնելը.

ե) Խեուի և խալխալի միջև հեռագ-
րի հաստատումը.

զ) Յեղերի երեխաների համար
Միշկինում և խալխալում դպրոցների
բացումը.

է) Նարին-Կալէ բերդի վերաշինումը,
այն շրջանում պահապան զօրք կենտրո-
նացնելու համար.

ը) Ամբողջ Չահ սովան ցեղերի 22
մասի դասաւորման գործը:

Յիշեալ գործողութիւնները ութ-
սուն օրւայ մէջ իրենց վախճանին հա-
սան մի վայրում, ուր քսան տարիներից
ի վեր կազուպուտն ու ինքնիշխանութիւնն
էր աւերապետում:

X. Ըզրալը Սայթանէ Մակուցին*)
որ երկար ժամանակ Մակուն և շրջա-
կայքը իր սեփականութիւնն էր դարձ-
րել և իւր անձնական նպատակները
տռաջ տանելու համար, այդ շրջանի քաջ
ժողովողին իր իշխանութեան ներքոյ էր
առել, միւս կողմից էլ զինուորական ցոյ-
ցերով, նախկին պետական զեկաւարնե-
րին իւր ղէմ գործելու հնարաւորութիւ-
նից զրկել (կարողութիւնից յետ պահել)
քանի-քանի տարիների ինքնիշխանու-
թեանը վերջ տրւեց և պատուոյ զահոյ-
քից, տանջանքի զահի տակ շարաւեց:

Ահա, Մակուայ խաների 11 տարւայ
չվճարած հարկերը մարտելու վրայ են:

Քրդական սերնդի մանկանց դաս-
տիարակութեան ու կրթութեան համար

*) Մակուայ Սարգարը այժմ գտնուում է
Թաւրիզի բանտում:

„Սփրահ“ անւամբ զպրօց է հիմնելու Մակի քրդերը. երբ Նորին Գերազանցութեան ոգորմածութիւնն իրենց դրաթեան նպատաւօր գտան, առաջին անգամ իրենց վայրերից դուրս գալով, իրենց ծառայութիւնը ցոյց տալու համար Խարիզ եկան և կամովին զինաթափ եղան ու իրենց վայրերը վերադարձան:

Մակի և Խոյի բնակչութիւնը, երկար տարիների հաջատահարութիւնից ազատելուց յետոյ, Նորին Գերազանցութեան իբրև երախտագիտութիւն, Խոյ Մակու ճանապարհը, որ ամենաղբււարինն է Ատրպատականում, իրենց սեփական ծախսով խճուղու վերածեցին և Նորին Գերազանցութեան հաճութիւնը ստանալով, ի պատիւ իրենց, խճուղին „Սփրահ“ անւամբ կոչեցին:

XI. Քեազիմ Կուշին, որ երկար տարիներից ի վեր, Ուրմիոյ լճի արեւմտեան ափին կից գտնուող Ղըրխլար կղզին, որը լճի մակերեսից 300 մետր բարձրութիւն ունի, զբաւել էր: Նա ապաւինած այդ անտօրի ամբոթեան ու իր հնարագիտութիւնների վրայ, վիշտայ

ցանցերի ու կղզու շուրջը թաղած դինամիտների վրայ յոյս դրած, հայրենիքի գաւաճանների զրգմամբ՝ խռովարարների կենտրոն էր գարձել:

Հատ կարճ ժամանակամիջոցում, սակաւաթիւ զինուորների յարձակմամբ 1302 թ. (1923) դոմս ամսի 25-ի գիշերը յիշեալ բերդը զրաւեց և զօրքի իշխանութեան տակ անցաւ:

Խռովարար Քեազիմը իր մի քանի համախոհներով սղանուեց, որով և Ատրպատականի վերջին խռովարարն ևս ճնշեց և ինքնիշխանութիւններին վերջ տրեց ամբողջ Ատրպատականում:

Պատերազմական աւարը՝ հրացաններ, ռազմամթերք, 2 թնդանօթ, ռումբաձիգ մեքենաներ, որը իր սեփական հնարագիտութեան արդիւնքն էր, զրաւեց զօրքի կողմից:

XII. Յիշեալ բերդը, այդ կուում նահատակւած, Սուլթան Ալի Նգամու անւամբ կոչեց:

Ահա հիւսիս-արեւմտեան բանակը թիակոխում է իր երկրորդ տարւայ ազգային տօնը՝ Նովրուզը (նոր տարին) տօնելու երկրի ճշմարիտ հովանաւորի

265-2012

ու դօրքի վերածնողի հովանու տակ՝
այն հպարտութեամբ, որ զօրքի զոհո-
ղութիւններով Ատրպատականի մթնո-
լորտը մաքրած է դաւաճաններից և
բարիքը, խաղաղութիւնն ու հանգստու-
թիւնը վերականգնած:

Բոլոր հպատակւած ցեղերը,
ուրախ սրտով ու բաց ճակատով
ձիր ու Խուրշուղի փայլի տակ, որպէս
զբաւական ճշմարիտ ծառայութեան,
ապրելու պարծանքն ունեն.

— օ —

Այսօր մի օր է, որ հիւսիս արեւ-
մտեան բանակը հինաւորաց Իրանի մե-
ծութեան և ուժի վերածնութեան յիշա-
տակին, արշալոյսի փառքի համար, Ի-
րանի բարորութեան ու վերածնութեան
արձանը կերտեց:

Մայր Հայրենիքը դարերի տանջանքից-
խեղճացած ու հսկաարքի մէջ իր որդու՝
միակ, համարձակ գերմարդ Նորին Գերա-
զանցութիւն ՍԱՐԴԱՐԸ ՍՓԱՀԻ աջակցու-
թեամբ, տանջանքի անկողնուց զլուխը
բարձրացրեց, խեղճութեան փոշին իրն
նից թոթափեց ու խաղաղարար զաւակ-
ներին տեսնելով պատուոյ պատմունճան հա-

գած Դարեհ և Սիրուս (Կիւրոս) դռչեց:

Այսուհետեւ նրանց նմանը ունենա-
լով, յանձինս Նորին Գերազանցութեան,
յաւիտենականութեան նշանաբանով հան-
գստութեամբ պիտի ննջի և իր հոշակի
Ժառանգութիւնը, այն անուանի մարդուն
իբրեւ յիշատակ պիտ յանձնի:

Ամբողջ սպայակոյտը այս արձանը
նւիրեց, իրեն նօր տարւայ նէր Նորին
Գերազանցութեան երկրի և ազգի հովա-
նաւորի մեծութիւնը, Աստուծուց ցան-
կանալով:

Յոյս ունինք, որ հիւսիս-արեւմտեան
բանակին կյաջողւի մատուցել այնպիսի
ծառայութիւններ, որ նրա յայտնի ա-
նունը ոուրբ հայրենիքի պատմութեան
մէջ՝ տեղ գրաւի:

Քանի որ Նորին Գերազանցութիւնը,
այս մեծ նահանգի շինարարութեան և
կրթական գործին յատուկ ուշադրութիւն
է դարձնում, մենք ևս ցանկանալու ենք
Աստուծուց, մեր ծառայութիւնների և
անձնագործութիւնների յարատեւութիւն և
լաջողութիւն մեր Ատրպատականցի շի-
րելի եղբայրների բարորութեան:

Սրտի խորքից, խրոխտ ձայնով
 գոչենք. — յարատև լինի հինաուրց Իրա-
 նը, Սիրուսի և Ջամի սնուցողը և կեցցէ,
 այն միակ աղատիչ, Նորին Դերազան-
 ցութիւն՝ ՍԱՐԴԱՐԸ ՍՓԱՀԸ:

Ատրպատականի գորբերի
 հրամանատար, ԷՄԻՐԸ-ԼԵՅԻՆԸ՝
 ԱԲԴՈՒԼԼԱՆ ԹԱՄԱՍԻ

900